

COVID-19-ի համավարակի ընթացքում աշխատանքի պայմանների գնահատման հարցաթերթ

Բարև Ձեզ: Հայաստանի Ամերիկյան Համալսարանի Գործարարության Հետազոտման և Ջարգացման Կենտրոնը իրականացնում է COVID-19-ի համավարակի ընթացքում աշխատանքի պայմանների գնահատման հետազոտություն: Հարցումն անանուն է և Ձեր տրամադրած տեղեկատվությունը օգտագործվելու է միմիայն ընդհանրացված տեսքով: Նախապես շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար:

Q1. Սեռ.

1. Արական
2. Իգական

Q2. Տարիքը. _____

Q3. Ասացեք ինդրեն, արդյո՞ք Ձեր կամ Ձեր ընտանիքի (Ձեզ հետ նույն տնային տնտեսությունում բնակվող) անդամների հետ տեղի ունեցել է ստորև նշվածներից որևէ մեկը Կորոնավիրուսի համավարակի պատճառով: (Ընդունել պատասխան յուրաքանչյուր տողում)

		Այո, տեղի է ունեցել	Ոչ, տեղի չի ունեցել	Դժվարանում եմ պատասխանել
1	Ազատվել աշխատանքից կամ կորցնել աշխատանքը			
2	Կրճատվել է աշխատավարձը աշխատանքային ժամերի կամ աշխատանքի պահանջարկի նվազման հետևանքով			

Q4. Ինչպե՞ս եք գնահատում Կորոնավիրուսի համավարակի ազդեցությունը Ձեր ֆինանսական վիճակի վրա: Համավարակը.

1. Հարվածել է իմ ֆինանսական վիճակին ավելի շատ, քան մարդկանց մեծամասնությանը
2. Հարվածել է իմ ֆինանսական վիճակին ավելի քիչ, քան մարդկանց մեծամասնությանը
3. Ազդել է իմ ֆինանսական վիճակի վրա նույնքան, որքան մարդկանց մեծամասնության վրա
4. Դժվարանում եմ պատասխանել

Q5. Ո՞ր մարզում եք բնակվում.

1. Երևան (Անցում Q7)
2. Արագածոտն
3. Արարատ
4. Արմավիր
5. Գեղարքունիք
6. Կոտայք
7. Լոռի
8. Շիրակ
9. Սյունիք
10. Տավուշ
11. Վայոց Ձոր

Q6. Ձեր բնակավայրի տեսակը.

1. Երևան
2. ՀՀ այլ քաղաք
3. Գյուղական համայնք

Q7. Նշե՛ք, ինչո՞րն է, Ձեր աշխատանքային գործունեության, զբաղվածության տեսակը:

1. Զբաղվում եք սեփական գործով (բիզնեսով)
2. Աշխատում եք որպես վարձու աշխատող
3. Աշխատում եք մասնավոր գործատուի մոտ որպես տնային աշխատող
4. Օգնում եք Ձեր ընտանեկան բիզնեսում (բացի գյուղատնտեսությունում աշխատանքից)՝ առանց վարձատրության
5. Զբաղվում եք գյուղատնտեսությամբ (գյուղմթերքի մշակում, արտադրում, վաճառք) և/կամ անասնապահությամբ
6. Վաճառքի նպատակով զբաղվում եք ձկնորսությամբ կամ վայրի կենդանիների որսով կամ անտառային մրգերի, հատապտուղների հավաքմամբ, վաճառքով
7. Աշխատում եք որպես փորձնակ կամ աշակերտ / աշակերտ արտադրությունում և վարձատրվել եք կամ վարձատրվելու եք
8. Որևէ աշխատանքային գործունեությամբ զբաղված չեք (Անցում Q9)

Q8. Ըստ Ձեր գնահատականի, քանի՞ մարդ է աշխատում Ձեր կազմակերպությունում:

1. 1- 9 աշխատող
2. 10 - 49 աշխատող
3. 50 - 249 աշխատող
4. 250 և ավելի աշխատող

Q9. Հետևյալներից ո՞րն է լավագույնս ներկայացնում զբաղվածության Ձեր վիճակը մարտի 1-ի դրությամբ (այն է մինչ արտակարգ իրավիճակի հայտարարումը):

1. Աշխատել եմ լրիվ դրույքով
2. Աշխատել եմ կես դրույքով
3. Աշխատել եմ օրավարձով
4. Չեմ աշխատել (Անցում Q11)
5. Հրաժարվում եմ պատասխանել

Q10. Ձեր աշխատավարձի / եկամտի չափը մարտի սկզբում, նշե՛ք, ինչո՞րն է, ո՞ր միջակայքում է գտնվել.

1	մինչև 92 000 դրամ	
2	92 001 - 120 000 դրամ	
3	120 001 - 180 000 դրամ	
4	180 001 - 500 000 դրամ	
5	500 001 - 1000 000 դրամ	
6	1000 001 -ից ավելի դրամ	
7	Հրաժարվում եմ պատասխանել	
8	Զգիտեմ / դժվարանում եմ պատասխանել	

Q11. Հետևյալներից ո՞րն է լավագույնս ներկայացնում զբաղվածության Ձեր վիճակը արտակարգ իրավիճակի առաջին 45 օրերի ընթացքում՝ մարտի 15 – ապրիլի 30:

1. Շարունակում եմ գնալ աշխատավայր
2. Վերջերս անցել եմ հարկադիր պարապուրդի
3. Աշխատանքից ազատվել եմ
4. Առաջ գնում էի աշխատավայր, հիմա աշխատում եմ տնից
5. Աշխատում էի տնից, շարունակում եմ աշխատել տնից
6. Աշխատում էի տնից, հիմա գնում եմ աշխատավայր
7. Չեմ աշխատել

Q12. Հետևյալներից ո՞րն է լավագույնս ներկայացնում զբաղվածության Ձեր վիճակը մայիսի 4-ից հետո:

1. Շարունակում եմ գնալ աշխատավայր
2. Վերջերս անցել եմ հարկադիր պարապուրդի
3. Աշխատանքից ազատվել եմ
4. Առաջ գնում էի աշխատավայր, հիմա աշխատում եմ տնից
5. Աշխատում էի տնից, շարունակում եմ աշխատել տնից
6. Աշխատում էի տնից, հիմա գնում եմ աշխատավայր
7. Չեմ աշխատում

Q13. Դուք/Ձեր ընտանիքի (տնային տնտեսության) անդամներն արդյոք օգտվե՞լ/օգտվելու են կառավարության ձեռնարկած միջոցառումներից: (Խնդրում ենք նշել բոլոր հնարավոր տարբերակները)

	Միջոցառման նկարագրությունը	
1	Մասնավոր առևտրային կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ նպատակային վարկերի համաֆինանսավորում, վերաֆինանսավորում կամ սուբսիդավորում 6 նպատակների համար աշխատակիցներին աշխատավարձի վճարում, հարկերի և տուրքերի վճարում, հումքի գնում կամ ներմուծում, սարքերի և սարքավորումների ներմուծում, ծառայությունների վճարումներ, սննդի ներմուծում:	1
2	Գյուղատնտեսության ոլորտում տրամադրվող վարկերի և գյուղատնտեսական լիզինգի համար բոլոր ծրագրերով և բոլոր սուբյեկտների համար տոկոսադրույքները գրոյացվել են, այսինքն պետությունն ամբողջությամբ վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում:	2
3	Օժանդակություն մի շարք ոլորտներում 24-500 մլն դրամ տարեկան շրջանառություն ունեցող տնտեսավարողներին մինչև 36 ամիս ժամկետով վարկերը տրամադրում՝ անձնական երաշխավորություն ներկայացնելու պայմանով	3
4	Յուրաքանչյուր անչափահաս երեխայի համար նվազագույն ամսական աշխատավարձի չափով աջակցություն աշխատանքի շուկայում գոյացած դժվարությունների արդյունքում սոցիալական խնդիրների առջև կանգնած մինչև 14 տարեկան երեխաներ ունեցող ընտանիքներին:	4
5	Աշխատավարձի ֆոնդի մոտ 16-50 տոկոսի չափով անհատույց դրամական օժանդակություն 2-ից մինչև 50 աշխատակից ունեցող այն տնտեսավարողներին, ում եկամուտների ծավալը չի նվազել 2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի ապրիլի 1-ը:	5
6	Միանվագ աջակցություն 68,000 դրամի չափով այն ֆիզիկական անձանց, ովքեր աշխատանքից ազատվել են 2020թ. մարտի 13-ից մինչև մարտի 30-ն ընկած ժամանակահատվածում:	6
7	Միանվագ նպաստ 100,000 դրամի տեսքով Հաստատված կորոնավիրուսի հետևանքով սոցիալական խնդիրների առջև կանգնած հղի կանանց:	7
8	Միանվագ դրամական աջակցության (մինչև 136 հազար դրամ) կորոնավիրուսի տարածման հետևանքով մասնավոր հատվածի տուժած ոլորտների վարձու աշխատողներին և անհատ ձեռնարկատերերին, ինչպես նաև երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատողներին:	8
9	Յուրաքանչյուր երեխայի համար 26 500 ՀՀ դրամ միանվագ դրամական աջակցության մինչև 18 տարեկան երեխաներ ունեցող ընտանիքներին, որտեղ երեխայի ծնողները չեն աշխատել:	9
10	Միանվագ աջակցություն 2020թ-ի առաջին եռամսյակի իրացման շրջանառության 10%-ի չափով (ոչ ավել, քան 136 հազար դրամը) միկրոձեռնարկատիրության որոշ սուբյեկտներին:	10
11	Աջակցություն 2020 թվականի փետրվար ամսվա ընթացքում սպառված բնական գազի և էլեկտրական էներգիայի դիմաց վճարի 50%-ի չափով՝ այն բնակիչ բաժանորդներին, որոնց 2020 թվականի փետրվար ամսվա ծախսը չի գերազանցել բնական գազի սպառման գծով՝ 10 000 դրամը, էլեկտրական էներգիայի սպառման գծով՝ 5 000 դրամը:	11
12	Աջակցություն 2020 թվականի փետրվար ամսվա ընթացքում սպառված բնական գազի և էլեկտրական էներգիայի դիմաց վճարի 30%-ի չափով՝ այն բնակիչ բաժանորդներին, որոնց 2020 թվականի փետրվար ամսվա ծախսը կազմել է բնական գազի սպառման գծով՝ 10,001 – 30,000 դրամ ներառյալ, էլեկտրական էներգիայի սպառման գծով՝ 5,001 -10,000 դրամ ներառյալ:	12
13	Աջակցություն 2020 թվականի ապրիլ ամսվա դրությամբ նպաստ ստացող ընտանիքներն օժանդակություն կստանան նպաստի 50%-ի չափով՝ 70%-ը կանխիկ, իսկ 30%-ը որպես էլեկտրական էներգիայի դիմաց վճար:	13
14	Կիսամյակի ուսման վարձի փոխհատուցում պետական բուհերում առկա ուսուցմամբ սովորող 90 և ավել տոկոս ՄՈԳ ունեցող՝ ավարտական կուրսի ուսանողներին 100, իսկ մյուս բոլոր կուրսերի ուսանողներին 75%-ի չափով:	14
15	Նշվածներից ոչ մեկ	15

Q14. Եթե Դուք կառավարության կողմից որպես Կորոնավիրուսի հետևանքների դեմ օգնության շրջանակներում ստանաք/կամ արդեն ստացել եք ֆինանսական աջակցություն, ապա ամենայն հավանականությամբ ինչպե՞ս կօգտագործեք այդ գումարի մեծամասնությունը:

1. Կմարեմ (արդեն մարել եմ) պարտքերս
2. Կվճարեմ (արդեն վճարել եմ) կուտակված հաշիվներս (կոմունալներ, ապահովագրություն, ապառիկ, վարկերի մարում և այլն)
3. Կծախսեմ (ծախսել եմ) իմ կամ ընտանիքիս անդամների առաջնային կարիքների վրա
4. Կծախսեմ (ծախսել եմ) իմ կամ ընտանիքիս համար ոչ էական/ոչ առաջնային կարիքների վրա
5. Կխնայեմ/չեմ ծախսի այն
6. Այլ
7. Ֆինանսական օգնություն չեմ ստանալու, չեմ համապատասխանում չափանիշներին
8. Դժվարանում եմ պատասխանել

Q15. Որքա՞ն հաճախ եք անհանգստանում, եթե ընդհանրապես անհանգստանում եք, հետևյալներից յուրաքանչյուրի համար:

		Ամեն օր	Գրեթե ամեն օր	Երբեմն	Հազվադեպ	Երբեք	Դժվարանում եմ պատասխանել
1	Կուտակված պարտքերի						
2	Աշխատանքը կորցնելու						
3	Հաշիվները վճարելու						
4	Իմ և ընտանիքի անդամների բժշկական ծառայությունների գումարի						
5	Մինչ կենսաթոշակի անցնելը բավականաչափ խնայելու հնարավորության						
6	Աշխատանքային ժամերի կամ աշխատանքի պահանջարկի նվազման հետևանքով աշխատավարձի կրճատման						

Q16. Նշվածներից ո՞րն է առավել լավ բնութագրում *սովորական ամսվա համար* ամբողջությամբ Ձեր բոլոր հաշիվները (կոմունալներ, ապահովագրություն, ապառիկ, վարկերի մարում և այլն) վճարելու Ձեր ունակությունը:

1. Մովորաբար ես կարողանում եմ ամբողջությամբ վճարել իմ բոլոր հաշիվները
2. Ես չեմ կարողանում վճարել որոշ հաշիվերի համար կամ մասամբ եմ վճարում դրանցից մի մասի համար
3. Դժվարանում եմ պատասխանել

Q17. Նշվածներից ո՞րն է առավել լավ բնութագրում *այս ամսվա համար* ամբողջությամբ Ձեր բոլոր հաշիվները (կոմունալներ, ապահովագրություն, ապառիկ, վարկերի մարում և այլն) վճարելու Ձեր ունակությունը:

1. Ես կկարողանամ ամբողջությամբ վճարել իմ բոլոր հաշիվները
2. Ես չեմ կարողանա վճարել որոշ հաշիվերի համար կամ մասամբ կվճարեմ դրանցից մի մասի համար
3. Դժվարանում եմ պատասխանել

Q18. Ասացե՛ք, ինդրե՛մ, Դուք արդյոք ունե՞ք խնայողություններ արտակարգ իրավիճակների կամ սև օրվա համար, որոնք կփակեն առաջիկա 3 ամսվա Ձեր ծախսերը: Օրինակ՝ հիվանդության, աշխատանքը կորցնելու, տնտեսական անկման կամ այլ արտակարգ իրավիճակի դեպքում:

1. Այո \longrightarrow Անցում Q20
2. Ոչ
3. Դժվարանում եմ պատասխանել

Q19. (*հարցնել, եթե Q18-ում նշել է 2-րդ և 3-րդ տարբերակը*) Եթե Դուք կորցնեք Ձեր եկամտի հիմնական աղբյուրը՝ օրինակ աշխատանքը կամ նպաստը, թոշակը, կարո՞ղ եք արդյոք հոգալ առաջիկա 3 ամսվա Ձեր ծախսերը պարտքով գումար վերցնելով, խնայողությունները ծախսելով, ակտիվները վաճառելով կամ ընկերներից, բարեկամներից պարտք անելով:

1. Այո
2. Ոչ
3. Դժվարանում եմ պատասխանել

Q20. Ձեր կրթությունը.

1. տարրական
2. հիմնական
3. միջնակարգ / ավագ
4. նախամասնագիտական (արհեստագործական)
5. միջին մասնագիտական
6. բակալավր
7. մագիստրոս
8. դիպլոմավորված մասնագետ (հնգամյա բարձրագույն կրթություն)
9. հետբուհական (ասպիրանտուրա, դոկտորանտուրա, ինտերնատուրա, օրդինատուրա)

Q21. Եթե աշխատում եք, խնդրում ենք նշել այն ոլորտը որտեղ աշխատում եք:

1. Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն
2. Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում
3. Մշակող արդյունաբերություն
4. Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում
5. Զրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում
6. Շինարարություն
7. Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգու
8. Փոխադրումներ և պահեստային տնտեսություն
9. Կացության և հանրային սննդի կազմակերպում
10. Տեղեկատվություն և կապ
11. Ֆինանսական և ապահովագրական գործունեություն
12. Անշարժ գույքի հետ կապված գործունեություն
13. Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն
14. Վարչարարական և օժանդակ գործունեություն
15. Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովություն
16. Կրթություն
17. Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում
18. Մշակույթ, զվարճություններ և հանգիստ
19. Սպասարկման այլ ծառայություններ
20. ՏՏ գործունեություն, որպես գործատու
21. Օտարերկրյա կազմակերպությունների գործունեություն
22. Հրաժարվում եմ պատասխանել
23. Չեմ աշխատում

Q22. Խնդրում ենք դասակարգել Ձեր պաշտոնը (աշխատատեղն) ըստ հետևյալ խմբերի:

1. Ղեկավարներ՝ օրենսդիր, գործադիր, դատական, ՏԻՄ, կազմակերպությունների, քաղաքական և հասարակական միավորումների
2. Բարձր որակավորման մասնագետներ
3. Միջին որակավորման մասնագետներ
4. Գրասենյակների ծառայողներ
5. Սպասարկման, բնակարանային կոմունալ տնտեսության, առևտրի ոլորտի աշխատողներ
6. Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական ոլորտի որակավորված աշխատողներ, օպերատորներ, ապարատավարներ, մեքենավարներ, փականագործներ
7. Մասնագիտական որակավորում չունեցող աշխատողներ
8. Հրաժարվում եմ պատասխանել
9. Չեմ աշխատում

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Հարցերի դեպքում կարող եք զանազահարել Հայաստանի Ամերիկյան Համալսարան, Գործարարության Հետազոտման և Զարգացման Կենտրոն՝ +374 60 612 607